Ա. ՏԱՐԻ —·(5/18 ՅՈՒԼԻՍ, 1903. — ՌՈՒՍՃՈՒՔ)·— Թիւ 4

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցէ՝
Rédaction du journal
VERADZNOUTIOUN
ROUSTCHOUK (Bulgarie)

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան՝ 10 Ֆրանք, կէստարեայ՝ 5 Ֆրանք։

Գրութիւններ եւ յեղի դարձիր։
Ծանուցումի տողը՝ 20 սանթիմ։

ԳՈՐԾԸ

Եթէ հայ յեղափոխական շարժումները չը հասան իրանց յաղթանակին, եթէ եւրոպական դիպլոմատիայի ձեռքով ստեղծուած հանգամանքները եղան այդ ձախորդութեան պատճառը, չէ կարելի, սակայն, հերքել անգիտանալ, որ յեղափոխական գաղափարը մեզանում գնալով աւելի եւ աւելի հաստատուն, զուտ նախնական ամեն խառնաշփոթ մտաւոր տարրերից, որոշեց իր իմաստը, ամրապնդեց իր կարեւորութիւնը, գծագրեց իր պատմական ժամանակայարմար նշանակութիւնը։

Հակառակ ամեն գործնական ձախորդութիւնների, որոնք իրանց ծանրութեան տակ խեղդեցին երբեմնակի ու մասնակի աջողութիւնները—մերթ ընդ մերթ փայլուն, որով գրաւական էին ապագայ աջողութիւնների.—հակառակ այն ոգէտ ու մոլի դիմադրութեան, որ այդ գործունէութիւնը հանդիպում էր երբեմն նոյն իսկ հայութեան ծոցում, յեղափոխական գաղափարն ըստ ինքեան գործեց իր ազդեցութիւնը, անցաւ այդ բովից և դուրս եկաւ զօրաւոր, փորձուած, աւելի ժամանակայարմար քան առաջ, աւելի պայմանաւորող հայութեան գոյութեան խնդիրն ու նրա առաջադիմութիւնը, աւելի ծանրանալով հայ խղճմտանքի վրայ՝ իբրև անպայման կերպով իր գործադրութիւնը պահանջող մէկ անհրաժեշտութիւն։

Այսպէս է գաղափարի ոյժը, այն գաղափարի, որ երեւան է գալիս ճիշդ իր պատմական րոպէին, և երեւան է գալիս յայտնի հաստատութեան ընդհանուր կենցաղի հետազօտութեամբ։ Եւ ապա նա իր բարձր իմաստով, իր լուսաւոր իդէալով թափանցում է իրան մատչելի գիտակցութիւնների խորը, տիրանում նրանց և ներշնչելով նրանց իրա մեծ նշանակութեամբ, թեւաւորում է նրանց միտքը, որն այդ րոպէից սկսում է լայնանալ և ընդգրկել մէկ ամբողջ ժողովրդի հատմական ճակատագիրն ընդհանուր մարդկութեան զարգացման շրջանակում։

Բայց գաղափարն անշարժ ու կայուն չէ։ Որքան աւելի և աւելի է նա լուսաւորում գիտակցութիւնները, այնքան աւելի էլ նա զարգանում և ընդարձակւում է հասնելով իր ամբողջական ու բուն իմաստին նոյն այդ գիտակցութիւնների մէջ։ Եւ, միւս կողմից, որքան աւելի է՝ ներկայանում ու պարզւում նրա ամբողջական իմաստը, այնքան աւելի էլ զտւում, ճշգւում ու պարզւում է նա իր մասնաւորութիւններով, իր միմեանց պայմանաւորող մասնակի կէտերով, իր զարգացման յաջորդական ընթացքներով, իր հետեւաներով։ Այսպէս է, օրինակ, որ յեղափոխական գաղափարը մեզանում սկզբները հայ գիտակցութիւնների կողմից ընդունեցաւ առհասարակ իբրև մէկ ապստամբական կռիւ ընդդէմ թիւրք բռնակալութեան, մինչև որ ժամանակի ընթացքում բանձրացաւ այդ բաւական պարզկայ ու դիւրին հասկացողութիւնից, որոշեց ու յուզեց մտքերը, դնելով դրանց առաջ մի շարք գաղափարական հարցեր, տեսական դրութիւններ, որոնք դուրս էին ծորում իրանց մայր աղբիւրից, այսինքն գաղափարի ամբողջական իմաստից։ Եթէ այդպիսով աւելի էր ընդարձակւում յեղափոխական գաղափարի հասկացողութեան սահմանը հայ յեղափոխական շարքերում, միւս կողմից աւելի էլ որոշւում, պարզւում ու գծագրւում էր նրանց աչքին այն ուղին, որ պէտք է անցնեն հասնելու համար իրանց նպատակներին, նպատակնե՛ր, որոնց աղբիւրն էին որոշ սկզբունքներ՝ համաձայն ներկայ պատմական իրականութեան։ Այդ սկզբունքները նրանց առաջ դրած էին սկզբից ի վեր, ծրագրային որոշ հիմնական դրութիւններով և հնչակեան մամուլի մեկնութիւններով։

Եւ այդպէս է, որ հայ յեղափոխական գաղափարն ամ թափանցել է յեղափոխական շարքերն իր իսկական ու հիմնական իմաստով։ Այսօր մտքերի մէջ նա ձգտում է դառնալ աւելի որոշ կերպով գծագրուած մի գաղափար, այն է — socialisms–յեղափոխական, այսինքն բուն այն հիմնական գաղափարը, որ սկզբից ի վեր արձանագրուած է նրանց Ծրագրի ճակատին։ Եւ այն, ինչ առաջ հայ յեղափոխական մտքերի համար առ հասարակ զուտ ծրագրային դրութիւն էր, դեռ անմատչելի յեղափոխական ընդհանրութեան, այսօր սկսել է առաւել կամ պակաս թափանցել ամեն գիտակցութիւնները և պայմանաւորել նրանց մտածման եղանակը։

Հայ յեղափոխական գաղափարի այդպիսի հասկացողութեան թափանցումը յեղափոխական շարքերում ո՛չ միայն նշանակելի է ըստ ինքեան, այլ նրա հետեւանքները պէտք է լինեն վերին աստիճանի բեղմնաւոր։ Ընդլայնալով հասկացողութեան սահմանը, պէտք է ընդլայնանայ նաև գործունէութեան ասպարէզը, պէտք է նորանոր աղբիւրներ առաջանան գրգռելու յեղափոխական աւիւնը գործիչների սրտերում, յեղափոխական թռիչը նրանց մտքերում, որով յեղափոխական գործն ինքը կը գտնէ անսպառ ոյժ իր առաջխաղացութեան համար, իր գործնական կենդանութեան համար, իր այնպիսի վերածնութեան համար որ նրան կը տանէ դէպի յաղթութիւն։ Յեղափոխական գաղափարի այդպիսի հասկացողութեան թափանցումը հայ յեղափոխական շարքերում ընդարձակում է դրանց գործունէութիւնն ամբողջ հայութեան վրայ, որպէս Մասիսից դէպի հարաւ, նոյնպէս և դէպի հիւսիս։ Եւ դրանումն է հայկական իրականութեան պատմական պահանջը ներկայումս, մի պահանջ, որ նրան պէտք է տանէ դէպի վերածնութիւն։

Ահա՛ այն յուսադրական, այն բեղմնաւոր, այն մեծ արդիւնքները, որոնց հասել ենք մենք այսօր։ Եւ դրա համար պէտք եղաւ ամբողջ տա՜սն և հինգ տարիից ի վեր գաղափարների սերմանումն և յեղափոխական գործունէութեան փորձառութիւն։ Ունենա՞նք անվհերութիւն դիտագրաւելու նորածագ ահաւոր դրութիւններին — մեր ջէնքն անփոխարինելի, նպատակայարմար ու զօրաւոր է։ Թէկուզ ներկայ երիտասարդ ամբողջ սերունդն իր կենսական բոլոր թանկագին ոյժերը նուիրաբերէ այդ գաղափարին և այդ գործունէութեան ճանքերին, նա դրանով իր պատմական պարտականութիւնը կը կատարէ միայն, բա՛ց և արած կը լինի մեծ գործ, պատմական գործ։ Նա դրանով անմահ ժառանգութիւն կը թողնէ ոգուտ իրա զաւակների, որոնք իրանց կողմից էլ կը շարունակեն արդիւնաւորել իրանց հայրերի մշակած սուրբ գործի հողը։ Որովհետև կեանքը միշտ առաջ է ընթանում, և ա՛յն մեծ գաղափարը կամ ա՛ն մասնիկնա-զատութեան, որ մենք կը թողնենք մեր ժառանգներին՝ կը քաղցրացնէ նրանց կեանքը և կը տայ նրանց ոյժ, միջոց ու գիւրութիւն աւելի առաջադիմելու իրանց ազգային ու մարդկային զարգացման մէջ։

Աւա՜ղ, մեր հայրերն այդպէս չէին մտածում, և ահա, տեսէ՛ք, թէ մեր ուսերին այսօր որպիսի ծանր խաչ ենք կրում... բայց և սո՜ւրբ խաչ...

ՀԱՅ ԲԱՆԲՈՒՐ

Կապոյտ չապիկը քրտինքից թրջած
Ահագին մուրճը յոգնած ձեռքերում
Բազմատանջ կուրծքը սեւ ծուխով պատած
Բանւորը անվերջ երկաթ է ծեծում...

Ճակատից կաթ-կաթ քրտինքը ընկնում
Երկաթի վերայ եռում է, փրփրում
Ու, ինչպէս առիւծ փակւած վանդակում.
Բանւորի կրծքում հոգին է յուզւում.,

Փայլուն բոցերը այրող չանթերի
Նորա երեսը, աչքերն են լիզում.
Բանւո՛ր, չը կարծե՛ս թէ հայրենիքի
Մեղմիկ զեփիւռն է քեզ սիրով շոյում..

Զնդանի վերայ կեանքդ է վչտալի,
Որի մէջը կայ՝ դառնութիւն, տանջանք,
Ա՛խ, որքան ծանր ես, որքա՛ն փչալի,
Արիւն-քրտինքով ցօղած աշխատանք

* * *

Գարունը երբ գայ՝ այն լերան լանջին
Ծաղկած վարդերից՝ պսակ կը հիւսեմ,
Ցոդնած բանւորի ծխապատ գլխին
Դալար պսակը՝ սիրով կը փնջեմ...

Թող նա մի րոպէ մոռանայ տանջանք
Իր հայրենիքի դաշտերը յիշի,
Թող նա մոռանայ ծուխ ու առապանք
Մի րոպէ ուրախ իր կեանքին նայէ...։

Բգոս, 1903 Օր. Քնարիկ

ՄԻ ՀԶՕՐ ՁԱՑՆ

(շարունակութիւն)

—o—

Եւրոպային վաղուց զգուշացրել էին։ Սասունի կոտորածի պատրաստութիւնները այնպէս հրապարակօրէն էին կատարւում, որ անգլիական հիւպատոսը մի ընդարձակ տեղեկագրով հայերի համար պաշտպանութիւն խնդրեց։ Անգլիան չէր կամենում «մի բարեկամ պետութեան ներքին գործերի մէջ խառնուել»։ Միշտ այս է բանաձևը։

Եւ ինչ որ դեռ անլուր և սոսկալին է, երբոր Եւրոպան այլևս տեղեակ է ամեն բանի, շարունակւում է այս աղէտը այսօր էլ։ Դեռ շարունակում են հայերին ազատութիւնից զրկել, կողոպտել, տանջել, բռնաբարել, անհատաբար և խմբով կոտորել։

Ես կարող էի հազարներով օրինակներ բերել։ Առնում եմ մէկը։

1900 թ. Յուլ. 3ին Քիւրդերը շրջապատում են Սպաղանք գիւղը։ Գնդակներով, սրերով, սուիններով գործել են սկսում։ Կանայք և երեխայք աղաչելով ելնում են զինւորների դէմ։ Փոքրիկ երեխաներին ողջ ողջ սուինների ծայրն եմ բարձրացնում, կանանց մերկացնում, լկում, սպանում։ 80 ամեայ գիւղական զառամեալ քահանայի բերանի երկու կողմերը կամաց ճեղքում են և ծնօտը դուրս քաշում։ Գիւղական տանուտիրոջ Թիմէնէ անունով կնկայ փորը պատառում են և երեխային կտոր կտոր անում. ապա մօրը դանակի յիսուն հարուածներով սպանում։ *)

Մենք միշտ գիտէինք, որ մեր Քաղաքակրթութիւնը ոճիրները, անհատական կողոպտումները և մարդասպանութիւնները չէ ընդունում։ Մենք ցաւում էինք այս իրողութիւնների վրայ, սակայն նրանք չէին հակասում այն բարձրութեան, որին մենք հասած ենք համարում։

Մենք բոլորս գիտենք, որ մեր կուլտուրան—քաղաքակրթութիւնը, նոյն իսկ քաղաքակիրթ տէրութիւնների մէջ, սոցիալական դժբախտութիւնը, աղքատութիւնը և չքաւորների անհոգութիւնը չէ ճանաչում։ Սակայն մինչև անգամ ամենաչքաւորների թշուառութիւնը՝ մեզ այնպէս է թւում, թէ արդի քաղաքակրթութեան բարձր մակերևոյթի դէմ չէ խօսում։

Մենք միշտ գիտենք, թէ ի՞նչ է նշանակում պատերազմ, ինչպէս նա չար կրքեր է բորբոքում, որպիսի սարսափներ է բերում իւր հետ։ Սակայն մենք պատերազմը չե՛նք մղում նախկին ժամանակների եղանակով։ Զօրապետները տխճութեամբ են ցաւ պատճառում խաղաղ բնակչութեան. կանանց և երախայոց դէմ միմիայն որոշ պայմաններում է պատերազմ մղւում։ Եթէ, օրինակ, քաղաքները ռմբակոծում են։ Պատերազմն էլ ոչինչ չունի մեր հայեացքի դէմ, քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանի վրայ կանգնելու։

Եթէ, ուրեմն, մենք յաճախակի ոճիրներն, սոցիալական անարդարութիւնը և դժնդակութիւնը, ցեղական և կրօնական ատելութիւնը, պատերազմների սարսափներն էլ ստիպուած լինէինք կարելի ընդունել, այնուամենայնիւ աւելորդ կը մնային այն չարագործութիւնները, որ մենք աչսօր անհրաժեշտ միակ հին կամ միջին դարերին յատուկ կը համարէինք։

Որանով էլ բաւականանանք։ Երբ որ Եւրոպան թոյլ տուեց որ սարսափները Հայաստանում, այսօր էլ Մակեդոնիայում՝ կատարուին, չարգիլեց, անկարելի է պնդել, որ մեր ժամանակը պատմութեան ամենախաւար, ժամանակներից զգալի կերպով առաջ լինի։

Երբոր անցեալ դարը 48թուին իւր առանցքի շուրջը պտոյտ եկաւ, կարծում էին, թէ նրա վերջին կիսին ժամանակի ոգուն համապատասխանող ամենագժուար և նուրբ հարցերը կարծարծուին՝ կրթական հարցերը անհատների և մարդկութեան համար։ Հին պարզ կոշտ հարցերը ժողովրդների ինքնավարութեան և ինքնուրոյնութեան մասին, ազգերի և անհատների անձեռնմխելիութեան, մամուլի ազատութեան, կրօնի, մտածողութեան, ճառելու և ժողովուելու ազատութեան մասին հայլն, ահա խնդիրներ, որոնք միանգամ ընդ միշտ պատասխանուած էին համարւում և որի մասին այլևս ոչ ոք խօսք չունէր զուր շռայլելու։

Եւ յիսուն տարուց աւելի յետոյ Ռուսաստանում 130 միլիոնից աւելի մարդիկ են ապրում, որոնք իրաւունք չունին ոչ մի գիրք և լրագիր կարդալու, որոնք իրենց բարեխօսների — խնամատարների կողմից նրանց համար անվնաս չեն գտնուած, և հէնց այս հանգամանքը, որ այնտեղ հարիւր միլիոնից աւելի մարդիկ այսպիսի վիճակում են գտնուում, Եւրոպայի կէսը բարոյապէս խեղդել, ձգելէ։

Ամեն կողմից դեռ ազգութիւններ են ճնշում, հարստահարում, ամեն կողմ հին դաւանաբանական և ազգայնական խնդիրները, որոնց մասին անկարելի է մի նոր հանկանալի խօսք ասել, դրաւում են ամենաբաւ մըտածողների ուշադրութիւնը, ոգևորութիւն զարթեցնում, հերոսներ և մատնիչներ առաջ բերում, այնպիսի մեծ գործերի են առիթ տալիս, որոնք հարիւր տարի առաջ իրենց տեղում կը լինէին, և այնպիսի թշուառութիւն և սարսափներ են պատճառում որոնք միջին դարերի հետ վերջացած պէտք է լինէին։

(շարունակելի)

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բերլին, Յուլիս 4.

Այս օրերս այստեղ էլ հասաւ Ձեր թերթի անդրանիկ համարը։ Ձեմ կարող զսպել իմ զգացմունքը, ուստի կը խնդրեի թոյլ տալ ինձ, որպէս ընթերցողի, հրապարակօրէն արտայայտել իմ խորին և անսահման ուրախութիւնը Ձեր այդ վերին աստիճանի համակրելի և խիստ ժամանակակից ձեռնարկութեան համար։ Իւրաքանչիւր հայ, որի համայ թանգ է հայութեան ազատութիւնն ու առաջդիմութիւնը, պիտի ծափահարութեամբ ողջունէ Ձեր այդ ձեռնարկը, պիտի բաց բազուկներով ընդունէ Ձեր այդ հրատարակութիւնը։ Այն հայը որի մտքի հայեացքը չէ սահմանափակուած իւր սեփական կեանքի նեղ շրջանակով, այլ տարածւում է հասարակութեան կեանքի ընդարձակ սահմանների վրայ, պիտի սիրով ողջունէ Ձեր թերթի երևան գալը, որովհետև Դուք ստանձնում էք հասարակութեան քաղաքական, տնտեսական և սոցիալական քեանքի այժմեան կազմակերպութեան խուզարկողի և դարմանողի դերը։ Միշտ դէպի առաջ նայող հայը, որը գտնում է ժողովուրդի առաջադիմութեան հնարաւորութիւնը նրա ազատ և բարեկեցիկ կեանքի մէջ և որը դէպի այդ բարեկեցութեան տանող ճանապարհը տեսնում է կեանքի հիմնովին յեղափոխում քարոզող չքեղ իդէալի մէջ, պիտի ցնծայ, տեսնելով, որ մեր այժմեան լճացած մտաւոր կեանքի մէջ ծագում է Ձեր թերթը, որի բռնած դիրքը ստիպում է թադրելու, որ նա վերջապէս պիտի սկսէ քարոզել, ամենայն ազատութիւն, ինչպիսի մեծ գործերի են առիթ տալիս, որոնք հարիւր տարի առաջ իրենց տեղում կը լինէին, և այնպիսի թշուառութիւն և սարսափներ են պատճառում որոնք միջին դարերի հետ վերջացած պէտք է լինէին։

(շարունակելի)

---

*) Պիէր քիյեար Հայաստանի համար (Pour l' Arménie) էջ 44։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ 4

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՈՒՐԷՆՑԻ-ի

թարգմանեց Ջրանսերենէ

Ա. Տ–եան

ՀԱՄԱՑՆԱԿԱՆ (ԿՕՄՄԻՒՆԻՍՏ) ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Անիշխանականները կարելի է դասաւորել երկու խումբերու, անհատական (ինտիվիտուալիստ) անիշխանականներ, համայնական (կոմունիստ) անիշխանականներ, առաջինները քիչ կրզբաղին հասարակական կեանքով, եւ իրենց կուսակիցներ կը գտնեն գլխաւորապէս բուրժուա դասակարգի մէջ։ Անոնք կը ձգտին գլխաւորապէս իշխանութեան ոչնչացմանը եւ չեն ցանկանար ուրիշ հիմնական բարեփոխումներու։ Իրենց ձգտումները դատապարտուած են նոյն իսկ միայն այն փաստով, որ անոնք չեն ուզեր ո՛չ մի փոփոխութիւն մասնաւոր սեփականութեան, աշխատութեան գործիքներու եւ սկզբնական նիւթերու մէջ։

Մենք կը զբաղինք ուրեմն միայն երկրորդ խումբով — համայնական անիշխանականներով։

Ի՞նչ կուզեն անոնք։

Տարիներէ իվեր կարդացած ենք անոնց պրոշիւրներն ու թերթերը եւ մենք այնտեղ գտանք հետեւեալ վարդապետութիւնները։

«Անիշխանութիւնն է, հաստատուն ազատութիւնը փոփոխութիւններու, այն է փոփոխութիւն վերածուած օրէնքի, պէտքերու եւ քմահաճոյքներու համեմատ։

«Այն է ազատ դաշնակցութիւնն ազատներու, ազատ կերպով ընկերակցած արդիւնաբերողներու» կ՚ըսեն գապանէլ եւ Լա-ղիկո, իրենց «հասարակական հարցի լուծումն համայնական անիշխանութեամբ» գրուածքի մէջ։

«Անիշխանականները կը պահանջեն անհատի բացարձակ ինքնավարութիւնը։ Ոչ օրէնք, մարդոց յարաբերութիւնները կը հիմնուին անհատական կամքի վրայ։ Կը կազմեն ազատօրէն խումբեր եւ անոնք ինքնավար են, իրենք կ՚որոշեն պէտք է արդեօք՝ թէ ո՛չ, ընկերակցիլ ուրիշ անհատներու կամ ուրիշ խումբերու հետ։ Ոչ ոք բռնադատուած կըլլայ պարտաւորութիւններու։ Ամեն մարդ կըլլայ ամբողջովին ազատ։

«Ազատութիւնը միայն բացարձակորէն կարող է արտադրել լաւ արդիւնք։ Մենք անիշխանական ենք, այսինքն մենք կ՚որոշենք մի ընկերական վիճակ, ուր մարդն ազատ ամեն խոչընդոտներէ, կարողանայ ինքն իրեն մէջ եւ իրմէ դուրս զարգացնել գործունէութեան սերմերը, որոնք բնութիւն անոր պարգեւած է»։ (La Revolte Ապստամբութիւն. 10 Յունվ. 1891 *)

Անիշխանութիւնն ուրեմն կ՚ուզէ բացարձակ ազատութիւն։ Անիկա բացասութիւնն է անհատական պարտականութիւններու ընկերութեան հանդէպ։

Անհատական կամքը միակ օրէնքն է կեանքի, իւրաքանչիւր անհատ ինքզինք կը նկատէ իբրեւ մի փոքրիկ վեհապետ, իբրեւ մի կեդրոն, որու շուրջ ամեն ինչ կը դառնայ, ինչպէս մի անձնաւորութիւն ամբողջովին ազատ ամեն կապերէ, որոնք զայն կը միացնեն ամբեալին, ներկային եւ ապագային։ Ո՛չ մի իշխանութիւն չիկանանաւորեր խումբերու գործունէութիւնը, ո՛չ մի կապ զանոնք չիմացներ, միակ ոյժը, որ կը կառավարէ ընկերական կեանքը, ատիկա անհատական կամքի իշխանութիւնն է։ Կանոնագրութիւններն նոյն իսկ անհրաժեշտ են սահմանելու համար խումբի մը անդամներու իրաւունքներն ու պարտականութիւնները, հիմնելու համար գործունէութեան ծրագիր մը։ «Եթէ այդ կանոնագրութիւնները կը կազմեն ոյժ մը, անոնք իշխանութիւններ են, եթէ առանց ազդեցութեան են՝ անօգուտ են»։ Այս այն է որ Բրուշտոնն ալ արդէն բնագրած էր. «Թողէք զայն ընել, թողէք անձնիլ՝ աւելի բառական եւ աւելի զայն մտքով»։

---

*) Անիշխանական թերթ Ռ. թ.

ռաջ տանել այդ իդեալը, կռիւ մղելով մեռցնող մտքի դէմ։ Սայթաքուն հողի վրայ կանգնած յեղափոխական մտքի այն դուստրները, որոնք նոյն այդ մտքի և գործի առժամանակեայ կաստումից հիասթափուել են, իրենց հաւատը դէպի նրա փրկարար նշանակութիւնը կորցրել են, պիտի նորից ոյժ ու եռանդ ստանան, թերահաւատութիւնը մէկդի նետեն, տեսնելով, որ այդ միտքը ոչ թէ մեռել և աշնացել է հայկական բարձրութիւնից, այլ ճախորդ պայմաններից միայն գադարի էր մատնուել և որ այժմ աւելի հաստուն կերպով պիտի վերածնուի «Վերածնութեան» էջերում։ Իսկ հայ սոցիալիստները, որոնք տեսնում են ժողովուրդի ազատութիւնը, մարդկանց եղբայրութիւնը և իրաւունքների հաւասարութիւնը սոցիալիզմի հսկայ իդեալի և անսասան սկզբունքների իրականացման մէջ, պիտի ուրախութեան զգացմունքով լեցուին, տեսնելով, որ «Վերածնութիւնը» յանձն է առնում իւր առաջնակարգ հոգսը դարձնել՝ տարիներից առաջ «Հնչակի» սկսած՝ սոցիալիստական հոյակապ ուսմունքի տարածման գործը, աւելի հիմնական հողի վրայ դնելով այդ։ Եւ հէնց միայն դա անսահման պատիւ է բերում Ձեզ, աւելի ևս բարձրացնում «Վերածնութեան» արժէքը, որովհետև դա ապացոյց է, որ դուք սրականչ լսում էք հայութեան կեանքի այժմեան պահանջները, սուր հայեացքով թափանցում մեր սոցիալ-տնտեսական կեանքի զարգացման ընթացքը։ Եւ վերջապէս բոլոր հայ բանուորները, որոնք անխնայ կերպով շահագործւում են սեփական և այլազգ կապիտալի դևային ճանկերով, և այն հայ ինտելիգենտի որ ձգտումն է չինել երեսի վրայ ընկած, տնգութ ճակատագրին մատնուած և մինչև այժմ խորթ զաւակի վիճակի ենթարկուած հայ բանուոր դասակարգի ձգտումների տրտայայտիչը, պիտի անկասկած շնորհաւորեն Ձեր թերթի ապարէզ իջնելը։ քանի որ նա, ըստ երևոյթին, խոստանում է զբաղուել զանազան երկրներում ցրուած բոլոր հայ բանուորների՝ ազատութեան սերմերը բուսացնող, սոցիալիզմի անբիծ նպատակները իրականացնող մեր եղբայրակից այդ սեփականազուրկ դասակարգի շահերով, քանի որ «Վերածնութիւնը» նպատակ է դնում բարձրացնել նրանց միացման դրօշակը, յանկանում է ուսուցանել նրանց մայրենի լեզուով իրենց պատմական դերը։ Ի՞նչ են ապացուցում դրանք, եթէ ոչ «Վերածնութեան» ժամանակակից կեանքի արտայայտութեան անկանխակալ ընթացքը, եթէ ոչ նրա բռնած համարձակ անսխալ ուղին. և դրանք պիտի հաղարապատիկ աւելացնեն Ձեր թերթի թանկագին արժէքը։

Այդ խորհրդածութիւններն են ահա, որ ինձ չափազանց ուրախացրին Ձեր թերթի առաջին համարը կարդալուց։ Եւ, ստիպեցին հրապարակօրէն շնորհաւորել Ձեր այդ փառաբանութեան արժանի ձեռնարկը։ Ձեմ կասկածում, որ խմբագրութիւնդ մի անգամ յանձնառնելով հազարումի դժուարութիւններ, պիտի աճնուիրութեամբ առաջ տանէ այդ փշուռ, բայց միևնոյն ժամանակ քաղցր գործը, պիտի տոկուն կերպով աշխատէ իկատար ածել իւր առաջադրած նպատակը և հաւաստել ընթերցողի առաջին տպաւորութիւնները։

Թոյլ տուէք խնդրեմ ի վերջոյ խօսքս ողղել հայութեան։ Ձկայ հասարակական մի աւելի դժուարին գործ, ընթերցող, քան ազնակոխ եղածների բարձրացման և փրկութեան գործը, որովհետև այդ գործը, կռիւ է նշանակում, կռիւ դարերից իվեր մեզ կտակած սովորութիւնների դէմ, կռիւ ժառանգած մըտածողութեան դէմ, կռիւ իշխողների և ճնշողների դէմ, կռիւ կոպիտ ուժի դէմ... և այդ պատճառով էլ այդ գործն աւելի շատ զինուորներ է պահանջում, ուրեմն մեզնից իւրաքանչիւրը թո՛ղ զինուոր գրի այն մեծ իդէալի իրականացման կռուին, թո՛ղ ամեն մէկս իւր կարողութեան և ուժի համեմատ գաղափարի զէնք վերցնէ. թերթի պահպանման նիւթական օգնութիւնն օրինակ, նրա տարածելն անգամ ծառայութիւն է իդէալին։ Թո՛ղ իւրաքանչիւրը մեզնից անդադար աշխատէ այդ զօրքի—գաղափարակա՞ն զօրքի—շարքերն բազմացնել, քանի որ բազմացումը նշանակում է բարոյական ուժի աճում և միևնոյն ժամանակ առաջադիմութիւն գաղափարի, մերձեցում վերջնական նպատակի։

Աշխարհիս անկիւնները ցրուա՞ծ հայեր, ձեզ կապող միակ միջոցն է աղդալին քաղաքականութիւնը, խմբեցէ՞ք դրա շուրջը և թո՛ղ «Վերածնութիւնը» լինի ձեզ կապող օղակը։

Զանազան երկիրների հա՞յ բանուորներ, համախմբեցէք և առէք ձեր ձեռքը «Վերածնութիւնը», որից դուք կլսէք ձերսիրած հայրենիքի ձայնը, որից կիմանաք ձեզ հասկանալի մայրենի բառաբառով ձեր ցաւերի բացատրութիւնը։

Հա՞յ սոցիալիստներ, եթէ դու միայն «Սիրողներս» չէք սոցիալիզմի, հեռուից հեռու «հմակրողներս» նրա սկզբունքների, այլ արիւն և մարմին էք դարձել այդ գեղեցիկ և հմայիչ ուսմունքը, եթէ դուք համոզուած էք նրա ապատարար նշանակութեան և ոյժի մէջ, և այն ոչ թէ միայն ուրիշ աղգութիւնների, այլև հայ ժողովուրդի համար, մի՛ք լինի այլևս «կցուած-քա» բուրժուականկուսակցութիւնների, այլ խմբեցէ՛ք «Վերածնութեան» շուրջը, կենդրոնացրէ՛ք ձեր ուժերը նրա մէջ....

Ս. Կասեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Որմի, 27 Մայիս 1903

Որմի քաղաքից 28 վերստ հեռաւորութեան վրայ գտնւում է Թառդէվար գաւառակը, ուր առհասարակ քրդեր են. կան և մի քանի Ասորական գիւղեր, որոնցից ոմանք հէնց քիւրդերի հըպատակներն են, ոմանք՝ ներկայ Որմիի դատաւորի, Սալարի հպատակներն։ Առաջինները թէև քաջ, բայց անզէն են, իսկ վերջինները թէ քաջ և թէ լաւ զինուած իգիդներ են և աւելի ազատ, անկախ լեռնականներ, մասամբ աւազակաբարոյ։ Թալան կը բերեն միայն այն ժամանակ, երբ իրանց գիւղերի հօտն ու նախիրը Քրդերը տարած կը լինեն և մինչև հնգապատիկը յետ չբերեն՝ չեն դառնայ։

Վերջիններս բնակւում են հետևեալ գիւղերում՝

Մաւանա—	500	հրացան	վերցնող,
		բայց միայն 200	հրացան
Բալունան—	120	հրց. բայց. վերց.	60
Դօստաբան—	60	„ „	30
Շիբալի—	70	„ „	20
Քիւրանա—	50	„ „	30
Հաքքի—	30	„ „	15
գումար	830	գումար	355

Վերոյիշեալ գիւղերը գտնւում են Տաճկապարսկական Սահմանում Նրանից 28 վերստ հեռաւորութեան վերայ։ Տաճկայ սահմանային գաւառակն է Էլադէր, որի Բանա գիւղում նստում է սահմանապահ թիւրք ասկերը՝ թուով 10—20՝ մի տասնապետով։

Ջէլօները, յիշեալ գիւղերի քրիստոնեայ ժողովուրդը, որպէս քաջ և անվախ ազամարդիկ՝ Պարսիկ կառավարութեան կողմից ստացել են մօտ 125 հատ Վարանդիլ (պարսից վինուորական) հրացան, Պարսկական սամանը Քիւրդ հրոսակախմբերի վայրագութիւններից և ասպատակութիւններից պաշտպանելու համար. և յիրաւի, քրդերը դողում են Մաւանացի Ջէլօյի անունը լսելիս։

Այս կողմերում գտնւում են և քրդերի հետևեալ գեղերը՝ Հարքի, Սիդան, Սուրգի, Հնարբ, Շաքեաք են. որոնք պարսկահըպատակ քրդեր են, բայց տաճկայ կողմումն էլ բնակութիւններ են հաստատել՝ Պարսկաստանից տարած աւարը ա՛նտեղ մարսելու համար և ընդհակառակն այնտեղից բերածը՝ պարսկաստանում հանգիստ վայելելու։ Ի դէպ, Հայկական կոտորածների ժամանակ քրդերը Տաճկաստանից մեծ քանակութեամբ աւար էին բերել Որմիի կողմերը՝ հայ կնոջ շղնաղեստ, լաչակ, ֆէս, վերնազգեստ, զարդեր են են....

Այսօր այս բոլոր քրդական գեղերը մի շատ չնչին, բայց իրանց համար շատ բնական պատճառով կռւում են վիրոյիշեալ քրիստոնեայ քիւղերի Ջէլօ ազգաբնակութեանց հետ. 350 քրիստոնեայ քաջեր՝ 5—6000 քիւրդ գեղերի դէմ. Հերոսութիւնը կատարեալ խրախուսանքի է արժանի....։

Փիրօ անուն Հարքի գեղապետը մէկ տարի առաջ նեղացած տեղւոյն ներկայ դատաւորից՝ թողնում անցնում է Տաճկաստան ամբողջ իւր գեղով. իւր հողերը, ոչխար արածեցնելու արօտները մնում են անտէր. այս գարունքին Կուրդօ բէկզադէի հովիւները ոչխարը տանում նստեցնում են Փիրօյի անտէր մնացած տեղերից մէկում, որ մօտ է Բալուլանին (Ասորեբնակ գիւղ)։ Վերջիններս պահանջում են հեռացնել ոչխարը բայց քիւրդերը հակառակում են. տեղի է ունենում հրացանաձգութիւն և վիրաւորում է Կուրդօյի եղբայրը, որ բէկզատէ է։ Լուրը հասնում է Կուրդօ. ի մօր սկանջը. սա գրգռում է իւր ցեղին և ուղարկում է պատժելու շուն քեավուրներին, բայց վերադառնում են առանց մի յաջողութեան։ Հաւարը (օգնութեան կոչ) հասնում է միւս քիւրդ ցեղերին, որոնք շտապում են օգնութեան թուով 5—6 հազար. սոքա քշում. տանում են Ասորաբնակ գիւղերի տաւարը։ Մաւանացի Ջէլօները թուով 13 հոգի գնում են տաւարը դարձնելու, բայց շրջապատելով քրդերից հազիւ կարողանում են նահանջել և ապաւինել Շիբան գիւղում։ Բէչան սարհանգի *) ձին վիրաւորում ընկնում է. Բէչանը մի անկիւնում թաց նստում է, բայց միւս 12 հոգին ոտները ծակելով մէկից միւսն են անցնում մի ելք գտնելու համար. վրայ են տալիս քրդերը և կանացաբար այրում են գիւղը և 12-ի ապաւինած տունը՝ վերմակները նաֆտի մէջ թաթախելով և վառած՝ երդկից ներս կոխելով։ Բէչանը կանչում է, որ դուրսգան և կռուելով պաշտպանուին ու փախչին, բայց սոքա դուրս չեն գալիս, որովհետև իրանց ընկերներից մէկը վիրաւոր էր, որին չէին ուզում թողնել քրդերի ձեռքը։ Տունն ա՛ռում է. ծուխը խեղդում է 12 քաջերին և կրակը լափում է նոցա նահատակ մարմինները. քրդերը յափշտակում են քաջերի զէնքերը և հեռանում։ Ողբում, բայց կրճտացնում է Ջէլօն ատամները իւր նահատակների թշուառ կորստեան վերայ. ողբում ու ցաւում է, որ գնատգով չընկան այդ քաջերը՝ իւր հարազատները։

*) Սա մի քաջ մարդ է. որ կառավարութեան կողմից Սարհանգութիւն է ստացել. դաւանութեամբ նեստորական է և շատ յարգուած իւր ցեղից և քրդերից։

Փախչում է քուրդը և փակւում իւր գիւղերում։ Հետևում է նորան Զէլօն, գրոհ է տալիս նորա գիւղերի վերայ, հայհոյում, կանչում է նոցա քաջեր անուանելով. «Դուրս եկէք, է՛յ քաջ և վախկոտ շներ, եկէք դէմ առ դէմ կռուենք.» Բայց քուրդը տեղից չի շարժւում, նա թագ է կացել։ Զէլօն քշում բերում է նորա նախիրը 7 ձի հետը միասին։ Շաբաթ քաջ քիւրդը, որպէս հին դաշնակից, հարիւր ձիաւոր օգնութեան է ուղարկում քրիստոնեայ Զէլօյին, որին ցրուած տների վերայ կերակրում են և բերած աւարը ամբողջովին նորան տալիս։

Կառավարութիւնը չդիտէ իւր բռնած դիրքը, չդիտէ որին պատժէ։ Քանդւում, այրւում, թալանւում են դատաւորի ասորաբնակ անմեղ գիւղերը. բայց նա չի համարձակւում իւր հպատակին՝ օգնութիւն, դրամ, զէնք, փամփուշտ ուղարկել։ Երկրիս թագաժառանգին բարեհոգի Մաւլաներն ու ազդեցիկ և կոյր խաւանին այնպէս են հասկացրել իբրթէ Հայ ֆէդային է այս խռովութիւնների պատճառը, մինչդեռ հայի ոտքը դեռ այս կողմը չի դուրս եկել, նա բոլորովին անծանօթ է այս սահմանին, որ դէպի Ցաճկաստան է տանում։ Զէլօ քրիստոնէին, հայ յեղափոխական անունը տալով, թագաժառանգին դրգռել են խեղճ ու կրակ քրիստոնեայ անմեղ ազգաբնակութեան դէմ, որ և, թարմ տպաւորութեան տակ, հրամայում է այրել մի քանի (թւովերեք) քրիստոնեայ գիւղեր։ Քուրդն էլ իւր կողմից նուէրներ է ուղարկում թագաժառանգին և սուտ ու պատիր գանգատներով բարի վեհապետին դէպի քրիստոնեաները վատ տրամադրում։

Բայց չդիտեմ ի՞նչպէս է հաւատում թագաժառանգը այսպիսի զրպարտութիւնների, հայ աղնիւ յեղափոխակ. Պարսկաստանում ե՞րբ է ամենափոքրիկ ցոյցն արել...։

Ամօթ խաբեբայ ովիտային, անշուշտ թէև նոքա անպատիժ մնացին, բայց թագաժառանգը լաւ իմացաւ, որ քրդերն էին մեղաւոր և որ երբէք հայը այս գործում մասնակցութիւն չի ունեցել։

Կռիւը վերջացաւ ի վնաս Զէլօ քրիստոնեաների. այրուեցան գիւղեր, զոհուեցան 14 կարիճներ, կորցրին զէնքեր, բռնաբարուեցան 24 խոտ հնձող կանայք, ոտքի տակ գնաց հունձը, քշուեցաւ տաւարը։ Բարոյապէս էլ տուժեց Զէլոն. իբրև հաշուութիւն քուրդ բէկին՝ Կուրդօյին խնդրելով բերին քաղաք, կանչեցին և Զէլոների ներկայացուցիչներին՝ Բէջան Սարհանգին և մի քանի խալֆա ու կաշանների և Մուշէխիտի տան մէջ վերջիններս սէլամ տուին Կուրդօին, որ ներողութիւն է նշանակում և այսպէս քօռ ու փոշ՝ան վերադարձան իրանց աւարակ և սգաւոր գիւղերը, անդադար նոր կռուի սպասելով, որովհետև հաշտութիւնը առերեսս էր։ Ինչուսած Զէլօն մոռացումէ գալթել աւելի ազատ տեղ, բայց կառավարութիւնը աշխատում է քաղցր լեզուով պահել, առանց որոց Պարսկա Ցաճկական այդ սահմանը մեծ պատուհասների դուռ է։

Շահ—Արմէն։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ Գ.

Կառավարութիւնը ամենակատաղի կելպով առաջ մղեց Վալդեկ Ռուսսոյի սկսած հակակղերական քաղաքականութիւնը, միշտ թէև ու թիկունք ունենալով պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը կազմուած արմատականներից, սոցիալիստներից, և բուն հասարակապետականներից, ո՛չ իհարկէ Մելինից և Դէշանելից, որոնք շարունակ, հարկը պահանջած ժամանակ, կոմպլիմենտներ են արել հասարակապետութեան երդուեալ թշնամիներին, իրենք իրենց հասարակապետական անուանելով, բայց միշտ աչի բարեխնամ աչակցութեանն ապաւինելով՝ առաջինն իբրև մինիստր—նախագահ՝ դեռ Վալդեկ—Ռուսսոյից էլ շատ առաջ, երկրորդն իբրև պատգամաւորների ժողովի նախագահ՝ աչքը տնկած, միւս կողմից, Ելիսեան պալատի վրայ, Լուբէի փառքին նախանձելով, բայց աւա՜ղ...։

Շատ կրօնական ընկերութիւններ և միաբանութիւններ որոնք իրենց յատուկ դպրոցներն ունէին ու առանց կառավարութեան հսկողութեան հասարակապետութեան համար խորհրդատներ էին փորում, փակուեցան։ Ամենից վտանգաւորներին այլևս իրաւունք չտրուեց կառավարութեան հսկողութեան տակ էլ վերստին բանալու։ «Կուսանոցներիս» ու գրթութեան քրմերի կրօնական դպրոցներն էլ նոյն տեսակ վիճակի ենթարկուեցան։ Կառավարութեան գիւրին չնստեց այս բոլորը։ Շատ տեղեր, օր. Բրէտանում, գռեհիկ ժողովուրդն ահագին ընդդիմութիւն ցոյց տուեց ոստիկանական կոմիսարներին, շատ տեղ կռիւ, սուր, արիւն, բայց վերջ իվերջոյ, կառավարութիւնը յաջողութեամբ իրագործեց իւր նպատակները և այսպէս ասած՝ անցկացրեց ընկերութիւններին, միաբանութիւններին վերաբերեալ օրինագիծը։

Որպէսզի, ինչպէս անցեալ անգամ ակնարկեցինք, լոկ զգեստները ձևականօրէն փոխելով, միաբանութեան անդամները չկարողանան դասաւանդութեան իրաւունք ունենալ, կառավարութիւնը յիշեալ օրինագծին մի, եթէ կարելի է այդպէս ասել, յաւելուած ցանկացաւ կցել, օրի հիման վրայ երեկուայ «Ոկուսակրօն» հոգևորականը աւօր իրբև աշխարհական դասատու չկարողանայ դասեր աւանդել։ Ինչպէ՞ չերկարեցնենք։ Կառավարութիւնն իւր հակակղերական պայքարը շարունակեց անխնայ և անողոք։ Պատգամաւորների նոյն մեծամասնութիւնն հզօր պաշտպանութիւն ցոյց տուեց Կոմբի արմատական մնողոք մինիստրութեան։ Խօսքն էլ նոյն իսկ եկեղեցին պետութիւնից մի անգամ ընդմիշտ բաժանելու մասին։ Հակակղերա՛ն քաղաքականութիւնը հասաւ իւր ծայրաստիճանին։ Եւ ահա՛, ի մեծ զարմանս բոլորի, Վալդեկ—Ռուսսոն, հակակղերական քաղաքականութեան այժ տուողներից ամենանշանաւորներից մէկը, Սենատում խօսք է խնդրում կառավարութեան հակակղերական ուղղութեան դէմ խօսելու։ Նա թէև չէ քննադատում կառավարութեան ընդհանուր քաղաքականութիւնը —որ բացարձակապէս ընդհարման և հակասութեան տեղիք կըտար — բայց ցաւ է յայտնում, որ Կոմբը միաբանութիւնների խնդիրը անիսիր մերժում է, տերութեան հսկողութեան տակ էլ նոյն տեսակ դպրոցներ բանալու։

Նրա ճառը ահագին տպաւորութիւն է թողնում սենատականների վրայ։ Սոցիալիստները և արմատականները խորապէս յուզուած և գրգռուած են Վալդեկի դէմ, որ ամբողջ տարի լռել և այժմ միա՛ն ձա՛ն է հանում։ «Ոչինչ, ասում են նրանք, մեր քաղաքականութիւնը առանց Ռուսսոյի էլ առաջ կը մղենք»։ Կոմբի գրութիւնը շատ փափուկ դարձաւ։ Շատերը, ապ ճառից և բռնած դերքից յետոյ, նոյն իսկ մինիստրական ճգնաժամու մի մասին էլ խօսք բաց արին, բարեբախտաբար բոլորը, դէթ այժմ, իզուր անցան։ Վերջին օրերի յարձակումները և սոցիալիստների ու արմատականների բուռն դժգոհութիւններն անշուշտ մեծ ազդեցութիւն արին «խոհեմ և ծանրախոհ» քաղաքագէտի վրայ։ Անշուշտ իւր բռնած դիրքը և ապագան մի անգամ էլ և խորապէս կշռադատեց՝ դէպի իւր արժանաւոր յետնորդը։ Չ՞է որ երբ մի տարի առաջ կամովին ամբողջ մինիստրական կազմով ետ քաշուեց պետութեան ղեկը վարելուց, կըսպասէ՝ հանգիստ և խաղաղ, ասում էին, մինչև որ Ելիսեան պալատի փառաւոր գահի վրայ բազմելուն—հասարակապետութեան նախագահութեան — կարժանանայ։ Ո՞ւմ միջոցով արդեօք։

Յամենայն դէպս, յետոյ՝ Յուլիսի 4—ին Սենատում բռնած իւր դիրքով ցոյց տուեց, որ իւր նախկին ճառը և դատափետութիւնը այնքան էլ դրամագլխական նշանակութիւն չունեն։ Այնպէս որ, շնորհիւ սենատի նախագահ խոհեմ Ֆալիէրի ճարպիկութեան՝ Վալդեկ—Ռուսսոն էլ հակառակ ձա՛ն տուեց մի քանի կրօնական ընկերութիւնների խնդիրը քննելու ժամանակ, որոնք արտօնութիւն էին ցանկանում ունենալ իրենց դպրոցները բանալու, կառավարութեան հսկողութեան տակ։ Կառավարութիւնը մի բոլորովին անսպասելի և փառահեղ յաղթանակ տարաւ և սենատում էլ, իւր հակակղերական սուր քաղաքականութիւնը լիովին արդարացրեց։

Այսպէս թէ ա՛նպէս ֆրանսական պառլամենտը փոկեց իւր նստաշրջանը, դեռ նախագահ Լուբէի Անպլիա մեկնելուց առաջ և կատարեալ ազատութիւն տուեց արմատական մինիստրութեան իւր գործերը անսայթաք վարելու, մինչև հոկտեմբեր, բացման շրջանը։ Այս ժամանակամիջոցում մեծ գործեր կարող է կատարել Կոմբի մինիստրութիւնը և, եթէ աշնան տապալուի էլ, փառաւոր էջ գրաւել պատմութեան մէջ։ Ցաւանի է, որ 19—րդ դարու ամենազմրկալից և աշխարհաշարժողդրդ Դրայֆուսի գործը արմատական Բրիսսոնի մինիստրութեան օրով վերաքննութեան յանգաւ, շնորհիւ անմահ Զոլայի և իւր արժանաւոր գործակիցների։ Վալդեկ—Ռուսսոյի մինիստրութեան օրով Դրայֆուսը եթէ ոչ de jura, գէթ de facto ազատութիւն ստացաւ 5—ամեայ քսմնելի մարտիրոսութիւններից յետոյ։ Հարկաւոր էր դատարանի առաջ էլ արդարանալ։ Հռչակաւոր սոցիալիստ Ժորէսի վերջին մերկացումները խնդրին այնպիսի բացարձակ կերպարանք տուին, այնպիսի նորանոր վաւերաթղթեր հրապարակեցան, որ կառավարութիւնը մեծ իրաւունքով կարող է ա՛յդ աշխարհադղորդ գործը վերաքննութեան ենթարկել և զրպարտուածին, արդարև, իւր անբռնաբարելի իրաւունքները շնորհել։

Արդէն խօսք կայ թէ կառավարութիւնը կօգտուի հանգամանքից և արձակուրդներին Դրայֆուսի գործի վերաքննութեան ձեռնամուխ կը լինի։ Կը յաջողցնի այս և կիրագործի համայն քաղաքակիրթ աշխարհի բուռն ցանկութիւնը, այն ժամանակ կատարեալ իրաւունք կունենայ ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն — Liberté, egalité et fraternité — վսեմ նշանաբանը կրելու։ Ոչ մի ազգի մէջ չէ՛ր կարող անարդարութեան այդ տեսակ հաղուագէպ զոհը ոտքի կանգնել և իւր ամբաստանութիւնը բարձրագոչ հաստատել։ Այդ հաստատութիւնը կը լինի նաև իրաւաբանական ճանապարհով և այն ժամանակ համայն աշխարհը կազդակէ բարձրաձայն՝ կեցցէ ազատութիւն քարոզող երկնային Ֆրանսիան։ Ս. Տաշիր.

Վառնայէն ստացուած թղթակցութիւն մը մանրամասն կերպով կը նկարագրէ տեղին երեք ինկածներուն կազմակերպած հոգեհանգիստը, որուն մէջ պարզ կը տեսնուի թէ ինչպէս քիչ առաջ զիրար «խաչագող», «թրքաճոգի», «սատկած խմբագիր» եւ այլ գարշելի մակդիրներով որակող մտաւորական սնանկները ձեռք ձեռքի տրուած զինակցութիւն կազմած են «խաչագողի» մը յիշատակը յաւերժացնելու համար, հոգեհանգիստի ձեւին տակ։ «Սրտաչարժ եւ յուզիչ զինակցութիւն!!»։

Այդ տխուր դերակատարները հասարակութեան առջեւ մէկզմէկ ամենախայտառակ կերպով ամբաստանելէ ու բոլորովին՝ վարկաբեկելէ յետոյ կելլեն դեռ անամօթաբար նոյն այդ հասարակութեան դասեր տալու եւ հրաւիրելու որ ան պարսաւագրեր ուղարկէ Հնչ. Կուս. Կեդրոնին։

Սակայն ատոնք եւ ատոնց նմանները պէտք է գիտնան թէ՝ իրենք հոգեենթացիներու մէջ չեն ապրիր եւ թէ՝ ժողովուրդին մէջ կայ գիտակից ահագին մաս մը որ երբէք իրենցպէս ներէն առաջնորդուելու պէտք չունի՝ եւ իբր պատասխան՝ անոնց կը վերապահէ միմիայն իր արհամարհանքը։ Իսկ ատոնց պարսաւագրերը կերթան հանգչելու այն հարիւրաւոր ? ստորագրութիւն կրող հանրագրութեան քով, զոր պատրաստելու փութկոտութիւնը ունեցած էր «...պէք-օղլու» արարածը։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Б. Н. Малджиянъ — Русе.